ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ. ՍԱԿՍ ԺՈՂՈՎՈՑՆ, ՈՐ ԵՂԵՆ Ի ՀԱՅՍ

(Գիտա-քննական բնագիր)

Ալեքսան Յակոբեան

Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի (717-728 թթ.) «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» վերտառութեամբ յայտնի երկը գրուել է Մանազկերտի ժողովից յետոյ, այսինքն՝ 726 թ. յաջորդող երկամեայ ժամանակահատուածում, ինչպէս այդ մասին նշւում է հէնց նրա բնագրի որոշ կտորներում: Հեղինակը սկզբում համառօտ թուարկում է իրենից առաջ Հայաստանում տեղի ունեցած վեց կարեւորագոյն եկեղեցական ժողովները, ապա մանրակրկիտ ներկայացնում ասորի վարդապետների մասնակցութեամբ Ապահունիք գաւառի Մանազկերտ «գիւղում» իր գումարած ժողովում քննարկուած հարցերը եւ դաւանական յարակից խնդիրները:

Երկի առաջին մասում Յովհաննէս Օձնեցու շարադրած նիւթի մեծ մասը աղբիւրագիտական իմաստով եզակի է: Թէպէտ հեղինակի տեղեկատուութիւնից դուրս են մնացել այլ սկզբնաղբիւրներից յայտնի բազմաթիւ ուրիշ կարեւոր ժողովներ (օրինակ՝ Կարինի (շուրջ 530 թ.), Դուինի (607 եւ 645 թթ.) եւ այլն), սակայն, միւս կողմից, ըստ էութեան, միայն նրան ենք պարտական Հայաստանում Գրիգոր Լուսաւորչի կողմից Նիկիայի տիեզերական ժողովից յետոյ, այդպէս նաեւ՝ Ներսէս Մեծի կողմից Կոստանդնուպոլսի, իսկ Սահակ Պարթեւի ու Մաշտոցի կողմից՝ Եփեսոսի տիեզերական ժողովներից յետոյ ազգային ժողովների գումարման վերաբերեալ եզակի հաղորդումների համար:

Ի դէպ, նշուած ժողովներից առաջինի թուագրումը՝ Նիկիայի տիեզերական ժողովից (325 թ.) յետոյ եւ Լուսաւորչի քահանայապետութեան «Ի» (քսաներորդ) տարում (այդպիսի թուագրում է տալիս նաեւ հայ քաղկեդոնական պատմական աւանդոյթը ենթադրաբար Ը դարում ամփոփած «Նարրացիո»-ն), միայն առաջին հայեացքից է թւում հաւաստիութիւնից հեռու (325/6-20=305/6): Եթէ ենթադրենք, որ «Ի» ընթերցումը կարող էր առաջ գալ գրչական մի բաւական տարածուած սխալ վերծանութեան արդիւնքում՝ նախնական «ԲԺ» (=երկոտասան) թուից, ապա դժուար թէ հնարաւոր լինի պատահական համարել այս վերականգնուած թուականի ճշգրիտ համապատասխանութիւնը Կեսարիայում Գրիգոր Լուսաւորչի եպիսկոպոսական ձեռնադրման ժամանակին (325/6-12=314): Դա, ըստ Հ. Պօղոս Անանեանի վերջնական ճշգրտման, տեղի է ունեցել Լուսաւորչի քահանայանալուց (Վիրապից դուրս գալուց յետոյ՝ 311/312) մօտաւորապէս երկու տարի անց՝ 314 թ. աշնանը: Իսկ սա յուշում է Յովհաննէս Օձնեցու ձեռքի տակ գրաւոր սկզբնաղբիւրի (գուցէ անգամ՝ ժողովական փաստաթղթի) եղած լինելու ենթադրութիւնը, որը հնարաւոր է տարածել նաեւ յաջորդ՝ 381 եւ 431 թթ. յետոյ տեղի ունեցած երկրորդ եւ երրորդ ժողովների վերաբերեալ հաղորդումների վրայ:

Շահապիվանի (444 թ.) եւ «Քաղաքուդաշտի» (506 թ.) ժողովների յիշատակութիւնից յետոյ հեղինակը բաւականին մանրամասն ներկայացնում է վեցերորդ՝ Դուինում 554 թ. Ներսէս Բագրեւանդացու գումարած ժողովը (որի ընդունած փաստաթղթերը պահպանուել են «Գիրք թղթոց»-ում եւ «Կանոնագիրք Հայոց»-ի մեծ խմբագրութեան տարբերակներում), ինչպէս նաեւ հանգամանալից փնովում 632